դաստիարակչական և յուսուցչական ասպարիզի իւրում։ Զորրորդ՝ զռոճիկս Դաւթեանցի։ Ումիկեան Տիկնոջ և Թադէոսեանցի կարճել ի 1-էն յառաջակայ մարտի։ Խաչումեանցին վճարել զկէս մասն ռոճկի իւրոյ 31-ն յառաջագայ յունիսի։ իսկ միւսոց վճարել զամբողջ ռոճիկս իւրեանց միմիայն վասն յառաջագայ մարտ։ ապրիլ և մայիս ամսոց։ և Հինգերորդ՝ զԳերապատիւ փոխանորդն տեղւոյն առանձին գրութեամբ հրաւիրել ի զգուշութիւն և յարթուն հսկողութիւն ի վերայ բարոյական և կրօնական ուղղութեանց ինքեան յանձնեալ ուսումնարանաց։

Հ։ 623

ի 28 փետր։ 1890 ամի։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ։

ՔԱՂՈՒԱԾՔ ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ.

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Ազգիս։ ի 10 փետրուարի տարեւոյս համարաւ 55։ որով հաստատեցաւ ի պաշտօն նախագահի հոգաբարձութեան միդասեան տղայոց ուսումնարանին Հայոց Դեռաշէն գեղջ բարեկրօն Մեսրովբ քահանայի Տէր Գրիգորեանց ի տեղի Պօղոս քահանայի Եղիկոպոսեանց։

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Ազգիս։ ի 20 փետրուարի համարաւ 65 յանուն Սինոդի Բրոյ Էջմիածնի։ որով ի պատճառս մահուան Առաջնորդին Բեսարաբիոյ կարգեցաւ առժամանակեայ կառավարիչ հոգեւոր գործոց այնր վիճակի բարեշնորհ Համազասպ վարդապետն Համազասպեանց ցայլ առանձին կարգադրութիւն։

—

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Վեհափառ Հայրապետի Ազգիս։ ի 26 նոյն ամսոյ համարաւ 80։ յանուն Գրիգորի Բայանդուրեանց։ վասն կառուցանելոյ նորա յուխտատեղւոջ Շաւնաբաթի զհոյակապ զանգակատուն սեփական ծախսաք իւրովք։